ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՆՁՆԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Գաբոյան Աստղիկ Ռազմիկի
Կոտայքի մարզ, Կոտայք գյուղի Ս. Վարդանյանի անվան
միջնակարգ դպրոց

Գաբոյան Ա. Ռ., մաթեմատիկայի ուսուցչուհի,
մագիստրոս

Անձնային արժեքային կողմնորոշումը մարդու վարքը, գործունեությունը պայմանավորող կարևորագույն գործոն է, արժեքների բազմազանության մեջ որոշներին նախապատվություն տալու և ընտրություն կատարելու հիմնական մեկնակետ: Ասվածից հետևում է անձնային արժեքային կողմնորոշվածության ուսումնասիրության կարևորությունը (Միքայելյան Հ.Ս., 2018): Ինչո՞վ են պայմանավորված մարդու արժեքային կողմնորոշումները և ինչպե՞ս են դրանք կապված մարդու հոգեկանի հետ, կա՞ն արդյոք մարդու արժեքային կողմնորոշումները բնութագրող և դրանք ի հայտ բերող հայտանիշներ: Հասկանալի է, որ մարդուն շրջապատող արժեքների ու մարդու վրա դրանց ազդեցությունների բազմազանության մեջ դժվար է որոշակի պատկերացում

կազմել նրա անձնային արժեքային կողմնորոշման մասին կամ բնութագրել այն: Սակայն պարզվում է, որ գոյություն ունեն ոչ մեծ թվով արժեքներ, որոնց նկատմամբ մարդու վերաբերմունքը վճռորոշ է նրա անձնային արժեքային կողմնորոշման համար: Նման արժեքները ընդունված է անվանել հիմնական կամ բազային: Գոյություն ունեն տարբեր չափորոշիչներ, չափանիշներ և մոտեցումներ բազային արժեքները որոշելու և, ըստ այդ արժեքների, մարդու անձնային արժեքային կողմնորոշումները բնութագրելու համար:

Տարածված մոտեցումներից մեկը պատկանում է լեհ-ամերիկյան հոգեբան Միլտոն Ռոկիչին (1918-1988): Մ. Ռոկիչը դիտարկում է արժեքների երկու դաս: Դրանցից մեկը կազմում են թերմինալ կամ նպատակային արժեքները, երբ մարդը ունի համոզմունք առ այն, որ դրանց ձգտելը կարելի է դարձնել կյանքի նպատակ: Մյուս դասը կազմում են գործիքային արժեքներ, երբ մարդը ունի համոզմունք առ այն, որ մարդու այս կամ այն հատկությունը կամ գործողությունը (արժեքը) նախընտրելի է ցանկացած իրադրության մեջ: Յուրաքանչյուր դաս ներառում է 18 արժեք: Հարցվողին տրվում է նշված արժեքներից յուրաքանչյուրից մեկ ցուցակ: Հարցվողը պետք է այդ արժեքներից յուրաքանչյուրի դիմաց նշի 1-18 թվերից մեկը՝ ըստ իր համար այդ արժեքի կարևորության, այսինքն՝ արժեքները դասավորի՝ ըստ կարևորության (Միքայելյան Հ.Ս., 2018):

Թեստավորման պատասխանները հոգեբանի կողմից ենթարկվում են որակական մշակման, ինչը թույլ է տալիս գտնել որոշակի անհատական օրինաչափություններ: Հետագայում կիրառվել են նաև թեստեր, որոնք հենվում են արժեքների անհամեմատ ավելի լայն դասի վրա, քան՝ այստեղ ներկայացվածներն են: Սակայն փորձը ցույց է տվել, որ դրանց արդյունքները էապես չեն տարբերվում Ռոկիչի մեթոդիկայով կատարվող փորձարկման արդյունքներից (Միքայելյան Հ.Ս., 2018, էջ 230):

Հետազոտության նպատակներից մեկն էր ուսումնասիրել և համեմատել տարբեր տարիք ունեցող աշակերտների արժեքային կողմնորշումները՝ հիմնվելով թերմինալ և գործիքային արժեքների վրա: Հարցումը անցկացրել եմ երկու տարիքային խմբերում՝ Կոտայքի մարզի Ակունք գյուղի հիմնական դպրոցի 7-րդ և 10-րդ դասարաններում: 7-րդ դասարանից հարցմանը մասնակցել է 16 աշակերտ: 10-րդ դասարանից հարցմանը մասնակցել է 20 աշակերտ: Հիմնական նպատակներից մեկն էր պարզել, թե արժեքային կողմնորոշումները ինչ ընդհանրություններ կան և ինչ տարբերություն են կրում տարիքային այդ խմբերում: Աշակերտները արժեքները դասավորել են հերթականությամբ, ըստ իրենց համար այդ արժեքի կարևորության: Այնուհետև յուրաքանչյուր արժեքի համար աշակերտների դասավորած հերթականության համարակալումները գումարվել են իրար, և ինչքան փոքր թիվ է ստացվել, այնքան այդ արժեքը ավելի բարձր տեղ էր գրավում, այսինքն ավելի էր կարևորվում աշակերտների համար: Վերլուծելուց պետք է ուշադրություն դարձնել, թե որ տիպի արժեքներին են նրանք առաջնային կարևորություն տալիս: Որ տիպի արժեքներն են նրանց համար ոչ այնքան կարևոր, և որոնք

ընդհանրապես կարևոր չեն: Հետո պետք է անել համեմատություն և գտնել ընդհանրությունները և տարբերությունները:

Հետևյալ աղյուսակում ներկայացված են թերմինալ արժեքների նկատմամբ 7-րդ և 10-րդ դասարանի աշակերտների վերաբերմունքի վերաբերյալ հետազոտության արդյունքները Հարկ եմ համարում նշել նաև, որ այստեղ ներկայացված արժեքները մոդիֆիկացված են: Դրանք որոշ չափով տարբերվում են Ռոկիչի ներկայացրած արժեքներից, ինչը պայմանավորված է սովորողների տարիքային և մեր ազգային միջավայրի առանձնահատկություններով:

Աղյուսակ 1

Թերմինալ արժեքներ

7-րդ դասարան	10-րդ դասարան
1.Ընտանիքը,	1.Առողջություն,
2.Առողջությունը,	2.Ընտանիք,
3.Սերը,	3.Քո երջանկությունը,
4.Հարազատների երջանկությունը,	4.Սերը,
5.Ընկերները,	5.Նպատակին հասնելը,
6.Հայրենիքի հզորությունը,	6.Հարազատների երջանկություն,
7.Ազատությունը,	7.Ընկերները,
8.Քո երջանկությունը,	8.Անկախությունը,
9.Մաթեմատիկայի իմացությունը,	9.Ազատությունը,
0.Նպատակին հասնելը,	10.Կյանքի ապահովությունը,
11.Կյանքի ապահովությունը,	11.Հայրենիքի հզորությունը,
12.Անկախությունը,	12.Ճանաչումը,
13.Ճանաչումը,	13.Զվարճանք,
14.Ֆինանսական ապահովությունը,	14.Անգլերենի իմացություն,
15.Անգլերենի իմացությունը,	15.Մաթեմատիկայի իմացություն,
16.Զվարճանքը,	16.Ֆինանսական ապահովություն,
17.Լավ բնակարան ունենալը,	17.Լավ մեքենա ունենալ,
18.Լավ մեքենա ունենալ:	18.Լավ բնակարան ունենալը:

Ընդհանրությունները

Թե՝ 7-րդ, և թե՝ 10-րդ դասարաններում առաջնային նշել են՝ առողջություն, սեր, ընտանիք, անձնական երջանկությունը և հարազատների երջանկությունը: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր մարդու մոտ, անկախ տարիքից, առաջնային են ավանդական արժեքները. երջանիկ ընտանիք, հավատարիմ ընկերներ ունենալը բոլորի նվիրական ցանկությունն է: Նմանություն կար նաև վերջին տեղերում զբաղեցրած արժեքների ցանկում: Երկու տարիքային խումբն էլ վերջին տեղերում լավ մեքենա և լավ տուն ունենալու արժեքներն էին նշել: Դա վկայում է նրա մասին, որ տվյալ պարագայում աշակերտների մոտ գերակշռում էր լինելու այլ ոչ թե ունենալու համակենսաձևը (Միքայելյան Հ.Ս., 2018):

Տարբերությունները

Հետաքրքիր էր, որ 7-րդ դասարանում ազատության և հայրենիքի հզորության արժեքները ավելի բարձ տեղ են գրավում, քան 10-րդ դասարանի աշակերտների մոտ, իսկ զվարճանքը ավելի ցածր: Կարծեք, թե պետք էր հակառակը լիներ, բայց ինչպես տեսնում ենք մեր սպասած արդյունքը չգրանցվեց: Տարբեր է նաև մաթեմատիկականգիտելիքների հանդեպ վերաբերմունքը հետազոտվող տարիքային խմբերում: 7-րդ դասարանում ավելի են կարևորում մաթեմատիկական գիտելիքները քան 10-րդ դասարանում:

Նաև կարևոր է նշել, որ նպատակին հասնելու արժեքը ավելի բարձր տեղ է գրավում 10-րդ դասարանի աշակերտների մոտ: Դա խոսում է այն մասին, որ այդ տարիքում աշակերտները արդեն հստակ պատկերացնում են, թե ինչ են ուզում կյանքից, իրենց առջև դնում են նպատակներ և ձգտում հասնել դրանց:

Գործիքային արժեքների վերաբերյալ հետազոտության արդյունքները՝ դարձյալ 7-րդ և 10-րդ դասարանի աշակերտների մասնակցությամբ, ներկայացված են աղյուսակ 2-ում: Այստեղ նույնպես արժեքները մոդիֆիկացված են:

Աղյուսակ 2

Գործիքային արժեքներ

7-րդ դասարան	10-րդ դասարան
1.Դաստիարակվածություն, 2.Պատասխանատվություն, 3.Ճշգրտություն, 4.Հայրենասիրություն, 5.Աշխատասիրություն, 6.Ազնվություն, 7.Բարություն,	1.Դասիարակվածություն, 2.Պատասխանատվություն, 3.Ազնվություն, 4.Բարություն, 5.Հայրենասիրություն, 6.Աշխատասիրություն, 7.Նպատակասլացություն,
8.Հանդուրժողականություն, 9.Նպատակասլացություն, 10.Շփվողականություն, 11.Սկզբունքայնություն, 12.Ինքնուրույնություն, 13.Կենսուրախություն, 14.Հետևողականություն. 15.Զգացմունքայնություն, 16.Ինքնատիրապետում, 17.Գեղեցկություն, 18.Ռացիոնալիզմ:	8.Կենսուրախություն, 9.Ինքնատիրապետում, 10.Ինքնուրույնություն, 11.Շփվողականություն, 12.Ռացիոնալիզմ, 13.Հետևողականություն, 14.Հանդուրժողականություն, 15.Ճշգրտություն, 16.Զգացմունքայնություն, 17.Սկզբունքայնություն, 18.Գեղեցկություն:

Ընդհանրությունները

Առաջնային կարգով ընդհանուր են նշել՝ դաստիարակվածությունը և պատասխանատվությունը: Ինձ համար բնական էր, որ յուրաքանչյուր ոք, անկախ տարիքից, որպես առաջնային արժեք կընտրի դաստիարակվածությունը, քանի որ թե տանը, թե դպրոցում դաստիարակության վրա մեծ շեշտ է դրվում: Կար նմանություն նաև

վերջին տեղերում նշված արժեքների՝ գեղեցկության և զգացմունքայնության պարագայում:

Տարբերությունները

Գործիքային արժեքների դեպքում նույնպես ազգային արժեքները (հայրենասիրությունը) ավելի բարձր տեղ է գրավում 7-րդ դասարանի աշակերտների մոտ: Տարբեր է նաև բարության և ազնվության արժեքների հանդեպ վերաբերմունքը. այդ արժեքները ավելի են կարևորվում արդեն ավելի հասուն տարիքում, ինչը փաստում է այն, որ տարիքի մեծացման հետ մարդիկ ավելի լավ են ճանաչում կյանքը և սկսում են ավելի կարևորել այդ արժեքները: Տարօրինակ է, բայց հետազոտությունը ցույց է տալիս, որ փոքր տարիքում աշակերտները ավելի են կարևորում սկզբունքայնությունը, քան ավելի մեծ տարիքում: Իսկ կենսուրախության հանդեպ պատկերը հակառակն է. մեծ տարիքի աշակերտները ավելի են կարևորում դա, քան փոքր տարիքի աշակերտները:

Այնուհետև աշխատեցի համեմատել աշակերտների անձնային արժեքային կողմնորոշումները նաև ըստ մաթեմատիկայից ունեցած առաջադիմության: Ռոկիչի մեթոդով անցկացրեցի հարցում Կոտայքի մարզի, Կոտայք գյուղի Ս. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոցի 8-րդ և 9-րդ դասարանի աշակերտների հետ: Ընդհանուր հետազոտվող աշակերտների թիվը 50, որոնցից 15 ունեն բարձր առաջադիմություն, 15՝ միջին և 20-ը՝ ցածր: Հետազոտության արդյունքները մշակելու արդյունքում ստացա աղյուսակ 3-ում և աղյուսակ 4-ում ներկայացված պատկերը:

Աղյուսակ 3

Թերմինալ արժեքներ

Բարձր առաջադիմություն	Ցածր առաջադիմություն
1.Ընտանիք, 2.Նպատակին հասնել, 3.Անկախություն, 4.Ճանաչում, 5.Ընկերները, 6.Մաթեմատիկայի իմացություն, 7.Ազատությունը, 8.Հարազատների երջանկությունը, 9.Կյանքի ապահովությունը, 10.Սերը, 11.Ֆինանսական ապահովությունը, 12.Անգլերենի իմացությունը, 13.Առողջություն, 14.Հայրենիքի հզորությունը, 15.Քո երջանկությունը, 16.Զվարճանքը, 17.Լավ բնակարան ունենալը, 18.Լավ մեքենա ունենալը:	1.Ընտանիք, 2.Առողջություն, 3.Ընկերներ, 4.Սերը, 5.Ճանաչում, 6.Ազատություն, 7.Հայրենիքի հզորություն, 8.Քո երջանկություն, 9.Նպատակին հասնել, 10.Անկախություն, 11. Զվարճանք, 12.Ֆինանսական ապահովություն, 13.Կյանքի ապահովություն, 14.Մաթեմատիկայի իմացություն, 15.Անգլերենի իմացություն, 16.Հարազատների երջանկություն, 17.Լավ մեքենա ունենալ, 18.Լավ բնակարան ունենալ:

Ընդհանրություններ

Անկախ մաթեմատիկայից ունեցած իրենց առաջադիմության՝ թե բարձր, թե ցածր առաջադիմություններ ունեցող աշակերտները կարևորագույն արժեք են համարում ընտանիքը: Նմանություն կար ճանաչման հանդեպ նրանց վերաբերմունքի մեջ: Կար նմանություն նաև վերջին տեղերում նշված արժեքներում՝ լավ մեքենա և լավ տուն ունենալը:

Տարբերություններ

Պարզ է, որ տարբեր էր մաթեմատիկայի իմացության հանդեպ վերաբերմունքը կախված իրենց առաջադիմությունից: Ակնառու էր նաև նպատակին հասնելու հանդեպ նրանց վերաբերմունքը, բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները ավելի են կարևորում այդ արժեքը: Նույն պատկերն է նաև կյանքի ապահովության արժեքի դեպքում:

Աղյուսակ 4

Գործիքային արժեքներ

Բարձր առաջադիմություն	Ցածր առաջադիմություն
1.Դաստիարակվածությունը,	1. Դասիարակվածություն,
2.Նպատակասլացությունը,	2.Բարություն,
3.Պատասխանատվությունը,	3.Զգացմունքայնություն,
4.Բարությունը,	4.Ինքնատիրապետումը,
5.Ազնվությունը,	5.Շփվողականությունը,
6.Ինքնուրույնությունը,	6.Հանդուրժողականությունը,
7.Աշխատասիրությունը,	7.Նպատակասլացություն,
8.Հայրենասիրությունը,	8.Պատասխանատվություն,
9.Ճշգրտությունը,	9.Հետևողականությունը,
10.Ռացիոնալիզմը,	10.Ազնվությունը,
11.Ինքնատիրապետումը,	11.Աշխատասիրությունը,
12.Հանդուրժողականությունը,	12.Սկզբունքայնությունը,
13.Շփվողականությունը,	13.Հայրենասիրությունը,
14.Հետևողականությունը,	14.Գեղեցկությունը,
15.Սկզբունքայնությունը,	15.Ինքնուրույնությունը,
16.Գեղեցկությունը,	16.Ռացիոնալիզմը,
17.Կենսուրախությունը	17.Կենսուրախությունը,
18.Զգացմունքայնությունը:	18.Ճշգրտությունը:

Ընդհանրնություններ

Անկախ մաթեմատիկայից ունեցած առաջադիմությունից՝ աշակերտները առաջնային կարևորություն են տալիս դաստիարակվածության արժեքին: Կան նաև նմանություններ վերջին տեղերում նշված արժեքների դեպքում. մասնավորապես՝ կենսուրախության և գեղեցկության արժեքներին:

Տարբերություններ

Գործիքային արժեքների դեպքում տեսնում ենք, որ տարբերությունները ավելի շատ են: Օրինակ աշխատասիրության և նպատակասլացության արժեքները ավելի են

կարևորվում բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների մոտ: Ինքնուրույնության արժեքը նույնպես ավելի է կարևորվում բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների մոտ: Իսկ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները ավելի են կարևորում շփվողականությունը, զգացմունքայնությունը:

Գրականություն

Միքայելյան, Հ.Ս. **(2018).** Մաթեմատիկական կրթության արժեբանական հիմունքներ, մաս 1, «Էդիտ Պրինտ», Երևան 2018:

ԱՆՁՆԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Գաբոյան Աստղիկ Ռ.

Ամփոփում: Անձնային արժեքային կողմնորոշումը մարդու վարքը, գործունեությունը պայմանավորող կարևորագույն գործոն է: Աշխատանքում դիտարկվում է սովորողների անձնական արժեքային կողմնորոշումների ձևավորման խնդիրը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում: Հետազոտության նպատակներից մեկն էր ուսումնասիրել և համեմատել տարբեր տարիք ունեցող աշակերտների արժեքային կողմնորոշումները: Մյուս նպատակը արժեքային կողմնորոշումների կախվածության բացահայտումն է՝ ըստ սովորողների մաթեմատիկայից ունեցած առաջադիմության: Գոյություն ունեն տարբեր չափորոշիչներ, չափանիշներ և մոտեցումներ բազային արժեքները որոշելու և, ըստ այդ արժեքների, մարդու անձնային արժեքային կողմնորոշումները բնութագրելու համար: Աշխատանքում կիրառվել է Մ. Ռոկիչի մեթոդը: Դիտարկվել են ինչպես թերմինալ, այնպես էլ գործիքային բազային արժեքներ: Դրանք մոդիֆիկացված են և որոշ չափով տարբերվում են Մ. Ռոկիչի առաջադրածներիվ: Դա պայմանավորված է և տարիքային առանձնահատկություններով, և հայկական միջավայրի ինքնատիպությամբ: Ուսումնասիրությունները իրականացվել են Կոտայքի մարզի Ակունքի հիմնական դպրոցում: Առաջին նպատակի համար ընտրվել են 7-րդ և 10-րդ դասարանների, իսկ երկրորդ նպատակի համար՝ 8-րդ և 9-րդ դասարաններ աշակերտները: Աշխատանքում ցույց է տրվում, որ սովորողների արժեքային կողմնորոշումների վրա էապես ազդում են ինչպես տարիքային գործոնը, այնպես էլ նրանց մաթեմատիկայից ունեցած առաջադիմությունը:

Բանալի բառեր: Արժեք, թերմինալ արժեք, գործիքային արժեք, արժեքային կողմնորոշում, մաթեմատիկայի ուսուցման գործընթաց, Ռոկիչի մեթոդ:

THE PROBLEM OF THE FORMATION OF PERSONAL VALUE ORIENTATIONS IN THE PROCESS OF MATHEMATICAL TEACHING

Gaboyan Astghik R.

Summary. Personal value orientation is the most important factor determining human behavior and activity. The paper deals with the problem of the formation of personal value orientations of students

in the process of teaching mathematics. One of the objectives of the study was to study and compare the value orientations of students with different age characteristics. Another goal is to reveal the dependence of value orientations on students' progress in mathematics. There are various standards, criteria and approaches to the definition of basic values and, according to these values, to the characterization of a person's personal value orientations. We used the method of M. Rokeach. Both terminal and instrumental basic values were taken into account. They are modified and differ somewhat from those put forward by M. Rokeach. This is due both to age characteristics and to the uniqueness of the Armenian environment. The research was carried out in Akunk secondary school of Kotayk region. For the first goal, students in grades 7 and 10 were selected, and for the second goal, students in grades 8 and 9 were selected. The paper shows that both the age factor and academic performance in mathematics significantly affect the value orientations of students.
Keywords. Value, terminal value, instrumental value, value orientation, the process of teaching mathematics, the Rokeach method.

ПРОБЛЕМА ФОРМИРОВАНИЯ ЛИЧНОСТНЫХ ЦЕННОСТНЫХ ОРИЕНТАЦИЙ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ МАТЕМАТИКЕ

Габоян Астгик Р.

Резюме. Личностная ценностная ориентация является важнейшим фактором, определяющим поведение и деятельность человека. В работе рассматривается проблема формирования личностных ценностных ориентаций учащихся в процессе обучения математике. Одной из целей исследования было изучение и сравнение ценностных ориентаций учащихся с разными возрастными особенностями. Другая цель - выявить зависимость ценностных ориентаций от успеваемости учащихся по математике. Существуют различные стандарты, критерии и подходы к определению базовых ценностей и по этим ценностям - к характеристике личностных ценностных ориентаций человека. В работе использовали метод М. Рокича. Учитывались как терминальные, так и инструментальные базовые ценности. Они видоизменены и несколько отличаются от выдвинутых М.Рокичем ценностей. Это связано как с возрастными особенностями, так и с своеобразием армянской среды. Исследования проводились в средней школе Акунк Котайкского района. Для первой цели были отобраны учащиеся 7-х и 10-х классов, а для второй – учащиеся 8-х и 9-х классов. В работе показано, что как возрастной фактор, так и успеваемость по математике существенно влияют на ценностные ориентации учащихся.
Ключевые слова. Ценность, терминальная ценность, инструментальная ценность, ценностная ориентация, процесс обучения математике, метод Рокича.

Ստացվել է խմբագրություն՝ 15.08.2022
Գրախոսվել է՝ 30.08.2022
Կայքէջ է ուղարկվել՝ 23.09.2022